Հավելված
ՀՀ կառավարության 2017 թվականի
մարտի 23-ի N 296 - Ն որոշման

Կ Ա Ր Գ

ՏՈՏԱԼԻԶԱՏՈՐԻ, ԱՆՄԻՋԱԿԱՆՈՐԵՆ (ԽԱՂԱՍՐԱՀՈՒՄ) ԻՆՏԵՐՆԵՏ ՏՈՏԱԼԻԶԱՏՈՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՀԱՄԱՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՀԱՄԱԿԱՐԳԻՉՆԵՐԸ ՀԱՐԿԱՅԻՆ ՄԱՐՄՆՈՒՄ ՀԱՇՎԱՌԵԼՈՒ

1. Սույն հավելվածով կարգավորվում են տոտալիզատորի, անմիջականորեն (խաղասրահում) ինտերնետ տոտալիզատորի կազմակերպման գործունեության իրականացման համար նախատեսված համակարգիչները հարկային մարմնում հաշվառելու կարգի հետ կապված հարաբերությունները:

2. Տոտալիզատորի, անմիջականորեն (խաղասրահում) ինտերնետ տոտալիզատորի կազմակերպման գործունեության իրականացման համար նախատեսված համակարգիչները հաշվառվում են հարկային մարմնի կողմից:

3. Տոտալիզատորի կազմակերպման գործունեության մասով հարկային մարմնի կողմից հաշվառման ենթակա են տոտալիզատորի կազմակերպչի կողմից խաղադրույքների ընդունման համար նախատեսված համակարգիչները: Անմիջականորեն (խաղասրահում) ինտերնետ տոտալիզատորի կազմակերպման գործունեության մասով հարկային մարմնի կողմից հաշվառման ենթակա են խաղասրահում ինտերնետ տոտալիզատորի կազմակերպման համար նախատեսված համակարգիչները:

4. Տոտալիզատորի, անմիջականորեն (խաղասրահում) ինտերնետ տոտալիզատորի կազմակերպման գործունեության իրականացման համար նախատեսված համակարգիչները հարկային մարմնի կողմից հաշվառվում են Հայաստանի Հանրապետության հար-

կային օրենսգրքի 275-րդ հոդվածին համապատասխան հարկային մարմին ներկայացված՝ արտոնագրային հարկ վճարող համարվելու մասին հայտարարության հիման վրա:

5. Հարկային մարմինը տոտալիզատորի, անմիջականորեն (խաղասրահում) ինտերնետ տոտալիզատորի կազմակերպման գործունեության իրականացման համար նախատեսված համակարգիչները հաշվառում է ըստ առանձին հարկ վճարողների և ըստ գործունեության իրականացման վայրերի (հասցեների):

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ-ՆԱԽԱՐԱՐ Դ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ